# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Պահեստ 1 ՍՊԸ -ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/107 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | հանդերձարանպահարան | հանդերձարանպահարան | LS-22 | OOO Promet | Մետաղական զգեստապահարան՝ 4 առանձին, հավասար բաժանմունքով, պետք է ունենա 4 առանձին, միմյանցից անկախ փակվող բաժանմունք և համապատասխանաբար 4 առանձին դուռ։ Յուրաքանչյուր դուռը առանձին բանալիով կողպվող փականով: Յուրաքանչյուր փականի համար պետք է տրամադրվի առնվազն 2 հատ բանալի: Պահարանի բարձրությունը՝ 1800-1850մմ, լայնությունը՝ 590-610մմ, խորությունը՝ 480-510մմ, յուրաքանչյուր դռան մակերեսը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բաժանմունքի ֆասադային մակերեսի առնվազն 90%: Պահարանի կորպուսը և դռները պետք է պատրաստված լինեն պողպատից: Պողպատի հաստությունը՝ կորպուս՝ ոչ պակաս, քան 0.5 մմ, դռներ՝ ոչ պակաս, քան 0.5 մմ, կրող շրջանակ՝ ոչ պակաս, քան 0.8 մմ: Պահարանի կառուցվածքը պետք է ունենա բավարար կոշտություն և կայունություն դեֆորմացիաները բացառելու համար: Կրող շրջանակը պետք է լինի եռակցված: Յուրաքանչյուր դուռ պետք է ունենա առնվազն 2 կոշտացնող կող կամ համարժեք ամրացնող կառուցվածք, ինչպես նաև դռան վրա պետք է լինի գրպանիկ, ինֆորմացիոն ցուցանակի տեղադրման համար: Դռների վրա և հետևի պատին վրա պետք է լինեն բավարար չափով օդափոխման պերֆորացված անցքեր, որը պետք է ապահովի բնական օդափոխությունը, սակայն չի նվազեցնի դռան կառուցվածքային ամրությունը: Յուրաքանչյուր բաժանմունքում պետք է նախատեսված լինի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հագուստի կախման հնարավորություն, համալրված լինի ձողով, ձողի վրա առնվազն 2 կախիչ կեռիկներով: Ձողը և խախիչները պետք է լինեն մետաղական կամ շատ ամուր պլաստիկից: Փականները պետք է լինեն գործարանային արտադրության, ամուր և հուսալի: Դռների և կորպուսի շփման հատվածներում պետք է լինի ինքնակպչուն դեմպֆեր /ռետինե/պոլիմերային բուֆեր/ դռների փակման ժամանակ հարվածի և աղմուկի նվազեցման համար: Մակերեսները պետք է ունենան կոռոզիակայուն, փոշեներկային, մաշակայուն, հավասարաչափ ծածկույթ: Պահարանի որևէ դետալ չպետք է ունենա սուր եզրեր կամ շահագործմանը խանգարող այլ արտադրական թերություններ: Գույնը՝ բաց մոխրագույն: Պահարանի կառուցվածքը պետք է հնարավորություն տա կողային մասերից միացնել նույն նշանակության լրացուցիչ մոդուլներ/պահարաններ: Եթե գործարանային փաթեթավորումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | չհավաքված վիճակում է և ենթադրում է առանձին դետալների առկայություն, ապա Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի տարածքում հավաքել ամբողջը և պահարանը հանձնել Պատվիրատուին շահագործման համար պատրաստի վիճակում: Պետք է տրամադրվի առնվազն 1 տարի երաշխիք: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Паест 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/107 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |